ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ Է'Լ ԱՎԵԼԻ ԿԱՅՈՒՆ ՈՒ ՀՈՒՍԱԼԻ Է ԴԱՐՁԵԼ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

ԱՌԱՋԸՆԹԱՑ՝ ՄԻՄՅԱՆՑ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ

Վրաստանն ու Հայաստանը պայմանավորվել են ակտիվորեն զարգացնել տարածաշրջանային նշանակության համագործակցությունը՝ օգտագործելով միմյանց հնարավորությունները:

«Իմ գործընկերոջ կողմից ընդգծվեց տարածաշրջանային նշանակության համագործակցությունը: Մենք պատրաստ ենք, որպեսզի բազմակողմանի նախագծերում Վրաստանի հետ Հայաստանն է'լ ավելի ակտիվ մասնակցի եւ համարում ենք, որ այս առումով կարող ենք երկկողմ օգուտ ստանալ՝ ելնելով ազատ առեւտրային գոտու եւ պայմանագրերի ցանցից, որոնք ունեն Վրաստանն ու Հայաստանը: Հայաստանի հնարավորությունները եւս Վրաստանի կողմից կօգտագործվեն»,- ասաց Վրաստանի վարչապետը:

Գիորգի Կվիրիկաշվիլին ընդգծեց նաեւ, որ Վրաստանը ողջունում է Հայաստանի եւ Եվրամիության միջեւ համակողմանի եւ ընդլայնված պայմանագրի ստորագրման փաստը: «Երկու կողմերս համաձայնության եկանք, որ անհրաժեշտ է բարձր մակարդակի այցերն է'լ ավելի ակտիվացնել եւ՝ երկու երկրների ոլորտային գերատեսչությունների համագործակցությանն աջակցել: Մենք համաձայնեցինք նաեւ, որ մոտ ապագայում տեխնիկական խմբերի հանդիպումներ կայանան, որպեսզի երկկողմ համագործակցության հանձնաժողովի հանդիպումը կազմակերպվի եւ հուսով ենք, որ 2018-ին նման հանդիպում անպայման կանցկացվի»,- ասաց Վրաստանի վարչապետը:

«ՄԵՂ ՈՒՐԱԽԱՑՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԲԱՐՁՐ ՑՈՒՑԱՆԻՇԸ»

Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների միջեւ Երեւանում տեղի ունեցած բանակցություններում քննարկվել են տարբեր ուղղություններով համագործակցությունը զարգացնելուն ուղղված հարցեր:

«Քննարկել ենք երկկողմ հարաբերությունների բազմաթիվ հարցեր, դրանք վերաբերում են տնտեսական երկկողմ հարաբերություններին. ողջունում եմ այն փաստը, որ ունենք կայուն դինամիկա՝ առեւտրատնտեսական հարաբերություններում: Իմ գործընկերոջը շնորհավորում եմ՝ Հայաստանում տնտեսական աճի շատ բարձր ցուցանիշի կապակցությամբ, այս հաջողությունը մեզ եւս ուրախացնում է՝ որպես Հայաստանի բարեկամ եւ հարեւան պետություն»,- ասաց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նրա խոսքով, քննարկվել են այնպիսի կարեւոր ուղղություններ, ինչպիսիք են էներգետիկան, տրանսպորտը, զբոսաշրջությունը, մշակութային հարաբերությունները, արվեստը, կրթությունը եւ, իհարկե, ինչպես նշվեց՝ աշակերտների ու ուսանողների փոխանակման ծրագրերին աջակցությունը: «Մենք պատրաստ ենք Վրաստանի կողմից առավելագույնս օժանդակել երիտասարդների միջեւ նոր հարաբերություններին եւ այս ուղղությամբ իսկապես ունենք շատ անելիքներ: Կարեւոր է նաեւ նորագույն նվաճումների, փորձի փոխանակումը եւ ուրախ եմ, որ այս շրջանակում կայցելեմ Հայաստանի կրթական զարգացման «Թումո» կենտրոն, հուսով եմ, որ համագործակցությունն այս բնագավառում ավելի կխորանա»,- ասաց Վրաստանի վարչապետը:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի պաշտոնական պատվիրակության անդամների հետ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հարգեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Վրաստանի վարչապետին ուղեկցում էին Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը, Երեւանի փոխքաղաքապետ Կամո Արեյանը:

Գիորգի Կվիրիկաշվիլին հուշահամալիրում ծաղկեպսակ դրեց, ծաղիկ խոնարհեց անմար կրակի մոտ եւ մեկ րոպե լռությամբ հարգեց անմեղ զոհերի հիշատակը:

Վրաստանի վարչապետը ջրեց նաեւ Ծիծեռնակաբերդի հիշատակի ծառուղում՝ 2016-ին, իր կողմից տնկված եղեւնին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ԹՈՒՄՈ» ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, պատվիրակության անդամների հետ, այցելեց Երեւանի «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն:

Հանրակրթական ստեղծարար տեխնոլոգիական կենտրոնը մշակում եւ երիտասարդներին առաջարկում է թվային տեխնոլոգիաների եւ դիզայնի 14 ուղղություններ:

Շրջայցելով կենտրոնում՝ Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ Վրաստանը պատրաստ է հնարավորինս նպաստել վրաց եւ հայ երիտասարդների միջեւ համագործակցության խորացմանը: Վարչապետի խոսքով, ստեղծարար տեխնոլոգիաների «Թումո» կենտրոնի հիմնադրույթը նման է Վրաստանում գործող «Տեխնոպարկի» հիմնադրույթին, որը կողմնորոշված է երկրում նորամուծությունների ստեղծմանն ու զարգացմանը: Վրաստանի կառավարության ղեկավարի գնահատմամբ՝ հենց դա կարող է լինել հայկական կողմի առաջիկա համագործակցության նշանակալի ուղիներից մեկը: Վարչապետն ուշադրությունը բեւեռեց նաեւ կառավարության կողմից աշակերտների եւ ուսանողների փոխանակման ծրագրերի աջակցության հարցի վրա:

* * *

Մարտի 2-ի ուշ երեկոյան՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, պատվիրակության անդամների հետ, ավարտեց իր պաշտոնական այցը Երեւան: «Զվարթնոց» օդանավակայանում Վրաստանի վարչապետին, պատվիրակության անդամներին ճանապարհեցին Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը, պաշտոնական այլ անձինք:

Վրաստանի վարչապետի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի բոլոր միջոցառումներին ներկա էին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

«ՎՐԱՍՏԱՆ»-ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Փետրվարի 23-24-ը, աշխատանքային այցով, Երեւանում էր գտնվում Վրաստանի ներքին գործերի նախարարության պատվիրակությունը՝ Վրաստանի փոխվարչապետ, ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիայի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նախարարի տեղակալ Լեւան Կակավան, Կենտրոնական քրեական ոստիկանության դեպարտամենտի պետ Թոռնիկե Մուշկուդիանին, այլ պաշտոնատար անձինք:

Այցի շրջանակներում, Գիորգի Գախարիան հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը, երկկողմ հարաբերությունների ամրապնդման գործում, մեծապես կարեւորեց հաճախակի փոխայցերը, եւ հույս հայտնեց, որ Գիորգի Գախարիայի այցը Հայաստան նոր խթան կհաղորդի՝ Հայաստանի եւ Վրաստանի իրավապահ մարմինների միջեւ համագործակցության խորացմանը: Ջրուցակիցները երկուստեք կարեւոր են համարել այդ ոլորտում փոխգործակցությունը եւ բարեկամ երկու երկրներում անվտանգության ու կայունության ապահովումը նաեւ՝ տնտեսական, հումանիտար եւ այլ ոլորտներում առաջընթաց ու ձեռքբերումներ արձանագրելու տեսանկյունից:

Հայաստանի նախագահի հետ հանդիպմանը նախորդել էր Վրաստանի փոխվարչապետ, ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիայի հանդիպումը Հայաստանի ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:

Ավարտին, Վլադիմիր Գասպարյանը Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիային պարգեւատրեց «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

Երեւան կատարած այցի շրջանակներում, Վրաստանի ներքին գործերի նախարարության պատվիրակությունը, Վրաստանի փոխվարչապետ, ՆԳ նախարար Գիորգի Գախարիայի գլխավորությամբ, այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, էջմիածին Մայր տաճար, ծանոթացավ թանգարանի բազմադարյա ցուցանմուշներին:

Նկարում.- Վ.Գասպարյանը (ձախից) եւ Գ.Գախարիան հանդիպմանը:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՓՈԽԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Մարտի 2-ին, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպեց՝ Վրաստանի վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում Երեւան ժամանած, Վրաստանի փոխվարչապետ, արտգործնախարար Միխեիլ Ջանելիձեին:

Նախարարները գոհունակությամբ արձանագրեցին, որ բարձր մակարդակով վրաց-հայկական մշտական շփումները հնարավորություն են ընձեռում՝ վերահսկելու ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործման ընթացքն ու՝ նախանշելու նոր ծրագրեր:

Էդվարդ Նալբանդյանն ու Միխեիլ Ջանելիձեն քննարկեցին Հայաստանի եւ Վրաստանի ԱԳՆ-ների միջեւ պարբերական խորհրդատվությունների անցկացման, միջազգային կառույցների շրջանակներում փոխգործության սերտացման, իրավապայմանագրային դաշտի ընդլայնման, միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստի անցկացմանն առնչվող հարցեր:

Հայաստանի եւ Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներն անդրադարձան տարածաշրջանային ու միջազգային հրատապ մի շարք խնդիրների:

ՄԱՐՏԻ 8-Ը՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

ԵԹԵ ՄԱՅՐԻԿ ԵՄ՝ ԼՈՒՍԱԲԱՑՆԵՐ ԴԻՄԱՎՈՐԵԼՈՒ ԱՆՀԱԳՈՒՐԴ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՍ

... Մայր ծնվում են: Այդպիսին են հենց սկզբից: Մայրն իրականում առաքելություն է, պարգեւն ընդունելու պատասխանատվություն, պարտականություն... այստեղ կա սեր, անձնուրաց սեր, նվիրում ու հոգատարություն: Եթե բացակայում է այս հատկություններից թերեւս մեկը, ապա Մայրն էլ դադարում է Մայր լինել:

Այսօր համայն Վրաստանում նշում են Մայրության տոնը: Նշում՝ բոլորը, որովհետեւ ամեն մեկն ունի իր Մայրը՝ երկնային, թե երկրային, կենսաբանական, թե հոգեւոր...



Փորձում էի նյութիս հերոս ընտրել մեկի, ում մեջ կապրեին մայրական բոլոր հատկությունները՝ անկախ նրա կենսաբանական կամ հոգեւոր մայր լինելուց: «Վրաստան» թերթի խմբագրությունը, բարեբախտաբար, Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի շենքի երրորդ հարկում է տեղակայված եւ, դժվար չէր դպրոցականի հաջողություններին հետեւելով՝ գտնել հենց նման Մայրիկի:

Նախ՝ ճանաչեցի Աիդային, երբ միջոցառումներից մեկի ժամանակ լսեցի Պ.Սեւակի «Անլռելի զանգակատան» նրա գեղեցիկ կատարումը, հետո՝ նրա երկու եղբայրներին՝ Անրիին ու Ալեքսին: Այս եռյակից իմ ամենամեծ ոգեւորությունն այն ժամանակ էր, երբ երեքով բեմ բարձրացան՝ մեկը՝ երգում, մյուսները՝ նվագում... Իսկապես հաճելի էր, ուսանելի, եւ առավելեւս, երբ այդ պահին դահլիճում ուրախությունից արտասվող նրանց Մայրիկին տեսա: Հետո պարզեցի, որ երեխաները դպրոցի հպարտություններից մեկն են, իսկ Գայանեն ոչ միայն հիանալի մայր է, այլեւ՝ հրաշալի դուստր, քույր, տանտիկին ու հարս, ում դաստիրակության հիմքում՝ նաեւ ուրիշի հաջողությամբ ուրախանալու սերմանումն է, մարդասիրությունը:

Աիդային, Անրիին եւ Ալեքսին թբիլիսահայերը ճանաչում են՝ որպես մասնակից համայնքում տարվող գրեթե յուրաքանչյուր միջոցառման: Աիդան, ով արդեն Թբիլիսիի Իլիայի պետական համալսարանի ուսանող է, երգում է Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու երգչախմբում, պարում՝ Հայարտան «Տարոն» պարի համույթում: Եղբայրները՝ Անրին ու Ալեքսը, տիրապետում են ժողովրդական գործիքների՝ դուդուկ, դհոլ, պարում են եւ այս ամենը իրականացնում՝ ուսման մեջ առաջատարի աննահանջ դիրքերից:

- Ախր, միայն իմ շնորհիվ չէ, որ, ինչպես նշեցիք, հաջողակ Մայր եմ,- պնդում է Գայանեն,- իմ ամուսինն էլ արտակարգ հայր է, սկեսուրս՝ հրաշալի կին ու տատիկ: Ամեն մեկս մեր չափաբաժինն ունենք երեխաների դաստիարակման գործում:

Իսկ ես միեւնույն է առարկում եմ Գայանեին՝ Մայր ծնվում են: Եվ իմ այդ համոզմունքը տանում է դեպի ակունքներ:

Գայանեն 15 տարեկան էր, երբ մահացավ հայրը: Նա ավագն էր՝ երեք քույր, մեկ եղբոր մեջ: Պետք էր օգնել Մայրիկին ու պահել ընտանիքը: Նա թողեց երանելի ուսումն ու դրան հաջորդող մյուս երազանքները եւ անցավ աշխատանքի՝ մայրաքաղաքի արտադրամասերից մեկում: Աշխատում էր նաեւ մայրիկը, եւ կրտսերներին խնամելու պարտականությունը, նաեւ Գայանեինը դարձավ:

- Մենք սերնդակիցներ էինք, եւ ես նրանց հետ այլ կերպ չէի կարող վարվել, քան հավասարը հավասարի հետ: Դա երեւի բնավորություն դարձավ, հիմա իմ երեխաների հետ նույնն եմ, եւ կարծում եմ, դա է ամենաճիշտ մոտեցումը: Երեխան առավել շատ է վստահում, հետեւաբար՝ լսում խորհուրդդ: Երբեք չեմ ստիպում: Պարզապես ինչ-ինչ ճանապարհներով եմ փորձում հեռու պահել, օրինակ՝ համակարգչի մոտ անիմաստ նստելուց: Նրանցից յուրաքանչյուրի կյանքում երեւի թե ամենաազատ ընթացքն առաջին դասարանն էր, երբ ծեւավորվում էր սերը դեպի դպրոց, ուսում: Հաջորդ տարիներին արդեն սկսեցին հաճախել սպորտի ու մշակութային տարբեր խմբակների,- ասում է Գայանեն:

Ի դեպ, խմբակներն անվճար են եւ նյութական սղությունն այստեղ դեր չի խաղում: Նյութապես ապահով, հավանաբար, շատ ընտանիքների երեխաները ճիշտ հունով չեն գնում, ցավոք: Մեր օրերում բազմազավակ համարվող Գայանեն միշտ իր երեխաների կողքին է, ես նրան միշտ հանդիպում եմ դպրոցում, թեեւ երեխաներից ամենակրտսերն արդեն 14 տարեկան է: Ժամանակներն են փոխվել: Ազատությունն իր բացասական դրսեւորումներն է բերել եւ ծնողի, հատկապես՝ Մոր հետեւողականությունն առավել կարեւորել:

- Ընտանիք, ուր տիրում են սերն ու խաղաղությունը, սա եմ երազել,- ասում է Գայանեն:- ***Երջանիկ եմ, որ հենց այդպիսի ընտանիք ունեմ: Կա փոխադարձ վստահություն, հարգանք: Այս ամենը վերագրում եմ նաեւ սկեսրոջս: Հաճախ է մեջբերում այն արտահայտությունը, թե կիրթ ու խելացի մայրերն են ծնում կիրթ ու խելացի հասարակություն*** (խմբ. Եղիշե, V դարի հայ պատմիչ)***: Ծնունդով Գյումրիից, նա մասնագիտությամբ մանկավարժ է: Երբեք չի աշխատել, ընտանիքի ներքին կառավարումն է նախընտրել ու ամուսնու հետ ուս-ուսի՝ հասել նպատակներին: Երբ տեսա նրա ղեկավարած ընտանիքի նիստուկացը, սկսեցի դասեր քաղել: Ամուսինս Երեւանի պետական ճարտարապետական համալսարանի շրջանավարտ է, Թբիլիսիում ստացել է նաեւ իրավաբանի կրթություն: Այսօր, Վրաստանի «Լիբերթի» բանկի մասնաճյուղերից մեկի տեխնիկական կազմի գլխավոր մասնագետն է:***

- Հենց սկեսրոջս հորդորով,- շարունակում է Գայանեն,- ***ինքս ռուսական դպրոցի շրջանավարտ՝ երեխաներիս բերեցի հայկական դպրոց եւ որքան հպարտ եմ այժմ: Սկզբում երեխաների հետ միասին նստում ու սովորում էի գրել-կարդալ: Նրանք երեքն էլ այսօր գերազանց տիրապետում են ոչ միայն մայրենիին, այլեւ՝ վրաց լեզվին եւ սա նաեւ դպրոցի վրաց լեզվի մանկավարժների շնորհիվ: Աիդայի համալսարանական հաջողությունները հենց դրա վկան են: Նույնիսկ երեխաների դաստիարակության հարցում, թե մենք՝ ծնողներս, առավել պոռթկուն ենք, սկեսուրս՝ իր խորհուրդներով առավել զուսպ ու համբերատար է:***

Մայրության օրը՝ մարտի 3-ը, Բազոյան ընտանիքում կանցնի այնպես, ինչպես բոլոր տոներին, ելույթ կունենա եռյակը, որին կմիանա հայրիկը՝ ակորդեոնով, սկեսուրը՝ երգով, իսկ Գայանեին կմնա՝ պարել այդ ամենի տակ: Պարել, որպես երջանիկ Մայր... Տա' Աստված, երջանկությունն այդ հարատեւ լինի, անխափան ու կայուն:

Այո, այսքանից հետո, է'լ ավելի եմ պնդելու, որ Մայր ծնվում են, ու եթե մայր են դառնում, ապա ինքնակատարելագործվելու բացառիկ շարժառիթ են ունենում, քանի որ, երեխային օրինակ ծառայելը, մարդուն առավել կատարյալ է դարձնում: Եթե Մայրիկ են դառնում, ապա՝ ամեն օր ուրախության, զվարճության, անկեղծության ու սիրո անսպառ աղբյուր եւ, վերջապես լուսաբացներ դիմավորելու առավել մեծ հագուրդ ու ցանկություն են ունենում...

Շնորհավոր, սիրելի' Մայրիկներ, ձեզ առողջություն, առողջություն եւ միայն առողջություն... հազարավոր լուսաբացներ դիմավորելու համար:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ԱՏԵՍՏԱՅԻՈՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՓՈՓՈԽՎԱԾ ՁԵՎԱՉԱՓՈՎ

Ինչպես հայտարարեց քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին՝ հանրային դպրոցների 11 եւ 12-րդ դասարանների աշակերտներն ատեստացիոն քննությունները կհանձնեն փոփոխված ձեւաչափով:

Թեստավորումից հետո՝ աշակերտներն էկրանին կտեսնեն ոչ թե միավորներ, այլ տեղեկատվություն այն մասին՝ հաղթահարե՞լ են, արդյո, նվազագույն իմացության շեմը:

«Այդ կարեւորագույն նորույթը կներդրվի այս տարի: Մենք ուրախ ենք, որ մեզ հաջողվեց այդ հարցը համաձայնեցնել Կրթության եւ գիտության նախարարության հետ: Այն դեպքում, երբ աշակերտը կավարտի աշխատանքը կոնկրետ առարկայով, կոնկրետ թեստով, նա էկրանի վրա կտեսնի տեղեկատվություն, թե հաջողվե՞լ է, արդյոք, հաղթահարել արգելագիծը: Հաճախ են բարձրացնում հարց, թե ի՞նչ է ստուգում համակարգչի համակցված համակարգը: Ցանկանում եմ ընդգծել, որ այդ համակարգը առավելագույն ստույգությամբ չափում է կոնկրետ աշակերտի հնարավորությունները: Եթե աշակերտը չի կարողանում հաղթահարել կոնկրետ առարկայով նվազագույն իմացության շեմը, եթե աշակերտը չունի նվազագույն իմացություն, ապա, նա չի կարող ստանալ ատեստատ»,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

Նշենք, որ 11-րդ դասարանի աշակերտներն ատեստացիոն քննություններ են հանձնելու չորս առակայից՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն եւ աշխարհագրություն: Իսկ 12-րդ դասարանի աշակերտները՝ մաթեմատիկա, վրաց լեզու եւ գրականություն, օտար լեզու, պատմություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿՐՃԱՏՎՈՒՄ ԵՆ

Առանձին ուղղություններով բակալավրիատի ծրագրերով ուսուցումը չորսից նվազեցվում է մինչեւ երեք տարի: Բացի այդ, նախատեսվում է նաեւ մինչեւ մեկ կամ մեկուկես տարի կրճատել մագիստրատուրայի ուսուցման ժամկետը:

«Բարձրագույն կրթության մասին» օրենքում համապատասխան փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես է եկել Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը: Մոտ ժամանակներում կիստակեցվեն այն ուղղություններն ու ոլորտները, որտեղ հնարավոր կլինի ապահովել ուսուցման արդյունքները, որոնք անհրաժեշտ են բակալավրիատի համար: Ինչպես հայտարարեց որակի զարգացման ազգային կենտրոնի որակավորման զարգացման վարչության ղեկավար Նինո Բերելիձեն, բակալավրիատի եւ մագիստրատուրայի ծրագրերով ուսուցման ժամկետներով նվազեցումը կնպաստի համալսարանների ինտերնացիոնալիզացմանը: Նրա խոսքով, արդեն 2018 թվականի սեպտեմբերից ուսանողներին կտրվի բակալավրիատի ծրագրով եռամյա ուսուցման հնարավորություն:

Նինո Բերելիձեի խոսքով, վերոնշյալ օրինանախագիծն արդեն անցել է խորհրդարանական կոմիտեների լսումները եւ մոտ ժամանակներում կսկսվի դրա քննարկումն ու ընդունումը: Նրա կանխագծմամբ, օրենքը կընդունվի մարտի կեսերին:

67342 ՄԱՆԿԱՎԱՐԺԻՑ ՄԻԱՅՆ 9-Ն ՈՒՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ

Վրաստանի հանրակրթական հաստատություններում աշխատող 67342 մանկավարժից միայն ինն ունի բարձրագույն կատեգորիա: Այդ մասին տեղեկացրել է «Մանկավարժների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը»:

Տարածված տեղեկատվության համաձայն, որպես որակավորման բարձրագույն կատեգորիա գնահատվող մենտորի կարգավիճակով՝ ինը մանկավարժից երկուսն աշխատում է մասնավոր դպրոցներում, 7-ը՝ պետական կրթօջախներում:

Ինչ վերաբերում է մյուս կատեգորիաներին, ապա սահմանված են չորսը: Երկրորդ կատեգորիայի առաջատար կարգավիճակով մանկավարժների թիվը հասնում է 231-ի (153-ը գործում են պետական հանրային դպրոցներում, 78-ը՝ մասնավոր դպրոցներում), երրորդ կատեգորիայի, այսպես կոչված, ավագ մանկավարժի կարգավիճակ է տրվել 17179 մանկավարժի, որից 16914-ն աշխատում են հանրային դպրոցներում, 265-ը՝ մասնավոր կրթօջախներում: Չորրորդ կատեգորիայի, այսպես կոչված, պրակտիկ կարգավիճակով 44611 մանկավարժ կա, որից 45582-ն աշխատում են հանրային, իսկ 4029-ը՝ մասնավոր դպրոցներում:

Տարածված տեղեկատվության համաձայն, ներկա դրությամբ, գործող 67342 մանկավարժից հանրային դպրոցներում աշխատում են 5909-ը, իսկ մասնավոր հանրակրթական հաստատություններում՝ 8249 մանկավարժ: Ընդ որում, առանձին մանկավարժներ, միաժամանակ, աշխատում են ինչպես հանրային, այնպես էլ՝ մասնավոր դպրոցներում:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԸՆՏՐՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Մարտի 2-ին, Հայաստանի Ազգային ժողովը քվեարկությամբ ընտրեց Հայաստանի Հանրապետության 4-րդ նախագահին: Հայաստանի նախագահի պաշտոնում Արմեն Սարգսյանի թեկնածությանը կողմ է քվեարկել 90, դեմ՝ 10 պատգամավոր:

Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահն իր լիազորությունները կստանձնի ապրիլի 9-ին՝ Ազգային ժողովի հատուկ նիստում, որը գումարվում է գործող նախագահի լիազորությունների ավարտի օրը:

65-ամյա Արմեն Սարգսյանը ծնվել է Երեւանում: Սովորել է Երեւանի պետական համալսարանի տեսական ֆիզիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետում: 1976-1984թթ. դասավանդել է Երեւանի պետական համալսարանում, հիմնադրել է ԵՊՀ տեսական ֆիզիկայի Կոմպլեքս համակարգերի համակարգչային մոդելավորման բաժինը: Դասավանդել է նաեւ Քեմբրիջի համալսարանում, Լոնդոնի համալսարանի Մաթեմատիկայի ինստիտուտում:

1991-1995-ին զբաղեցրել է Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպանի պաշտոնը: 1995-1996-ին ԵՄ-ում ՀՀ Առաքելության ղեկավարն է եղել: 1996-1997-ին ստանձնել է Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը:

1998-1999թթ. վերանշանակվել է Միացյալ Թագավորությունում Հայաստանի դեսպանի պաշտոնում: 2013թ. սեպտեմբերին Արմեն Սարգսյանը երրորդ անգամ ստանձնել է Միացյալ Թագավորությունում Հայաստանի դեսպանի պաշտոնը:

2000 թվականից Eurasia House International կազմակերպության հիմնադիր նախագահն է: 2001-2011թթ.՝ Քեմբրիջի համալսարանի Ջաջ բիզնես դպրոցում Եվրասիական կենտրոնի հիմնադիրն ու տնօրենը:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր է:

Պարգեւատրվել է «Սուրբ Գրիգոր Մեծ» պարգեւով՝ Հովհաննես Պողոս Երկրորդ պապից, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» մեդալ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդից, պարգեւատրվել է նաեւ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով:

Հեղինակ է բազմաթիվ ակադեմիական հոդվածների եւ հրապարակումների՝ տեսական ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, համակարգչային մոդելավորման, քաղաքագիտության եւ անցումային տնտեսության ոլորտներում:

Ունի արտակարգ եւ լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՐԵՑ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Մարտի 1-ին Հայաստանի նախագահ, Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրեց Ազգային անվտանգության խորհրդի նիստ:

Ազգային անվտանգության խորհրդի նիստի օրակարգի շրջանակներում՝ քննարկման է ներկայացվել 2009 թվականի հոկտեմբերին՝ Ցյուրիխում, ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների մասին հարցը, որի վերաբերյալ զեկուցել է արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Սերժ Սարգսյանը, նիստի բացման խոսքում, հակիրճ անդրադարձավ՝ տարածաշրջանում ապահով ու համերաշխ ապագա կերտելու տեսլականով իր նախաձեռնությամբ սկիզբ դրված՝ առանց նախապայմանների Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացին եւ դրանից հետո տեղի ունեցած զարգացումներին. Նա, մասնավորապես, ներկայացրեց՝ ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումից հետո, միջպետական հարաբերությունների կարգավորման գործընթացն առաջ մղելու ուղղությամբ Հայաստանի ջանքերն ու, ի հակառակ դրա, միջազգային հանրության առջեւ իր ստանձնած պարտավորությունների կենսագործման ուղղությամբ, տարիներ շարունակ, Թուրքիայի կողմից դրական տեղաշարժի բացակայությունը:

Սերժ Սարգսյանը հիշեցրել է, որ Հայաստանը տարբեր առիթներով հայտարարել է, որ, այս հարցում Թուրքիայի կողմից հիշյալ քաղաքականությունը չփոխվելու դեպքում, Հայաստանը ցյուրիխյան արձանագրությունները կհայտարարի առոչինչ եւ 2018 թվականի գարուն կմտնի առանց դրանց:

Արտաքին գործերի նախարարի զեկույցից հետո՝ խորհրդի անդամները ներկայացրին իրենց դիրքորոշումները հարցի վերաբերյալ:

Քննարկման արդյունքում, անվտանգության խորհուրդը միաձայն հավանություն տվեց 2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված «Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» եւ՝ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների կնքման ընթացակարգի դադարեցմանը:

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 856,5 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանում 2017 թվականին իրականացված ներդրումները՝ պետական, վարկային եւ դրամաշնորհային միջոցներով, ինչպես նաեւ՝ մասնավոր, պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ, կազմել են ընդհանուր՝ 856,5 մլն դոլար:

Մարզերում իրականացվել են ծրագրեր, ընդհանուր՝ 170,9 մլն դոլար ծավալով, որոնք ներառված չեն վերոնշյալ 856,5 մլն դոլարի շրջանակում: Ընդհանուր առմամբ, մարզերում իրականացվել է 614 ծրագիր: Այս մասին նշված է Հայաստանի կառավարության կայքում հրապարակված ներդրումային ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունում:

Հայաստանի կառավարության կողմից մի շարք ընկերությունների տարբեր արտոնություններ են տրամադրվել եւ, տարվա ընթացքում, Հայաստանի տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունն՝ այդ ընկերությունների կողմից ներդրումային ծրագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ, մոնիթորինգ է իրականացրել: Ըստ մոնիթորինգի արդյունքների՝ 2017թ. կատարվել է շուրջ 506 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, որը ներառված է 856 մլն դոլարի ներդրումների մեջ:

ԵՐԵՎԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԳԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Երեւանի քաղաքապետարանը, Հայաստանի կոմպոզիտորների միությունը, Հայաստանի սփյուռքի նախարարության գործընկերությամբ, Երեւանի հիմնադրման 2800-ամյակի տոնակատարություններին ընդառաջ, հայտարարում են Երեւանին նվիրված երգի համահայկական մրցույթ:

Հայտարարության մեջ ասված է. «Մրցույթին կարող են մասնակցել հայ եւ օտարազգի կոմպոզիտորներ ու երգահաններ՝ առանց տարիքային սահմանափակման:

Յուրաքանչյուր հեղինակ իրավունք ունի ներկայացնելու մեկ երգ (ցանկացած լեզվով)՝ առավելագույնը 5 րոպե տեւողությամբ: Մրցույթին ներկայացվող երգը չպետք է հնչած լինի որեւէ նախագծում կամ մրցույթում:

Երգերը պետք է ներկայացնել նոտագրված՝ կլավիր տարբերակով եւ պարտիտուրով (ցանկալի է նաեւ՝ ձայնագրված):

Լավագույն ստեղծագործությունները կհնչեն մրցույթի գալա համերգում՝ կենդանի նվագակցությամբ ու կատարմամբ, որի շրջանակում կշնորհվեն համապատասխան մրցանակներն ու դրամական պարգեւները:

Հայտերն ընդունվում են ս.թ. մարտի 1-ից հուլիսի 15-ը:

Սահմանվում է.

Առաջին մրցանակ - 1 մլն դրամ

Երկրորդ մրցանակ - 700 հազար դրամ

Երրորդ մրցանակ - 500 հազար դրամ

Էլ. հասցե՝ composersunion@mail.ru, info@composers.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (+37410) 52-42-92, (+37443) 52-42-92 հեռախոսահամարներով կամ այցելել Հայաստանի կոմպոզիտորների միություն՝ ք. Երեւան, Դեմիրճյան 25, երկրորդ հարկ»:

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, փետրվարի 24-ին, ստորագրել է հրամանագիր՝ Հասմիկ Պողոսյանին Հայաստանի նախագահի խորհրդական նշանակելու վերաբերյալ: Այս մասին տեղեկացրին Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակայնության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունից: Հասմիկ Պողոսյանը 2006-2016 թվականներին զբաղեցրել է Հայաստանի մշակույթի նախարարի պաշտոնը:

ՀՆԱ-Ի ԱՃԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է 2017 թվականի Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճի ցուցանիշը՝ 7,5 տոկոս: Այն վերջին 10 տարում ամենաբարձրն է: ՀՆԱ երկնիշ աճ արձանագրվել է 2002-2007 թվականներին՝ միջինում 13 տոկոս: Համաձայն ԱՎԾ տվյալների՝ 2017 թվականին Համախառն ներքին արդյունքը բացարձակ արժեքով կազմել է 5 տրիլիոն 580 միլիարդ 116,9 միլիոն դրամ:

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

2017 թվականի հունվար-դեկտեմբերին Հայաստան է ժամանել 1 միլիոն 494 հազար 779 զբոսաշրջիկ, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 18.7 տոկոս: Նախորդ տարի Հայաստան ժամանած զբոսաշրջիկների 23.4 տոկոսն ԱՊՀ երկրներից են եղել, 21.3 տոկոսը՝ ԵՄ երկրներից, 55.3-ն՝ այլ երկրներից: Ռուսաստանից այցելած զբոսաշրջիկների մասնաբաժինն ամբողջի մեջ կազմել է 20.3 տոկոս, Ուկրաինայինը՝ 1.7, Գերմանիայինը՝ 4.7 տոկոս, Ֆրանսիայինը՝ 4.1, Միացյալ Թագավորությանը՝ 2.1, Նիդերլանդներինը՝ 0.7, Միացյալ Նահանգներինը՝ 13.6, Վրաստանինը՝ 2.9, Կանադայինը՝ 2.6, Թուրքիայինը՝ 0.7 տոկոս:

ՄԱՀԱՑԵԼ Է ՌԵԺԻՍՈՐ ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆԸ



Փետրվարի 28-ին, կյանքի 81-րդ տարում (ծննդյան օրվա հաջորդ օրը), վախճանվել է ռեժիսոր, սցենարիստ Ալբերտ Մկրտչյանը: Նա հայտնի եւ սիրված դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Միհր Մկրտչյանի փոքր եղբայրն է:

Ալբերտ Մկրտչյանը ավարտել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դերասանական բաժինը, Մոսկվայի Կինեմատոգրաֆիայի ինստիտուտի (ՎԳԻԿ) ռեժիսուրայի ֆակուլտետը: 1995-1999 թվականներին՝ Գյումրիի դրամատիկական, 2000 թվականից՝ Երեւանի Միհր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնների տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար:

Վրաց հանրաճանաչ երգիչ եւ դերասան Վախթանգ (Բուբա) Կիկաբիձեն, Ալբերտ Մկրտչյանի որդու՝ Միհր Մկրտչյանի հետ հեռախոսազրույցում իր խոր ցավակցությունն է հայտնել՝ իր վաղեմի բարեկամ Ալբերտ Մկրտչյանի մահվան առիթով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐՏ

4.03.2018. Անիրավ Տնտեսի կիրակի

7.03.2018. Միջինք

Ըստ Մաղաքիա արք.Օրմանյանի՝ Միջինք անունը տրվում է Մեծ պասը կիսող օրվան, որը տոնական նշանակություն չունի: Միջինք է Դ (չորրորդ) չորեքշաբթի կամ Մեծ պասի 24-րդ օրը: Միջինքից սկսած՝ Խաղաղական ժամերգության ընթացքում սկսում են երգվել Ստեղի շարականները՝ հավուր պատշաճի:

Այդ օրը, ըստ ժողովրդական ավանդության, հայ տանտիկինները թխում են բաղարջ, որի մեջ մետաղադրամ են դնում: Ում բաժին ընկնի այդ դրամը, այդ տարի հաջողություն կունենա:

10.03.2018. Սուրբ քառասուն մանկանց հիշատակության օր

ՊԱՏԱՀԱՐ

ՀՐԴԵՀ՝ ԹԲԻԼԻՍԻ «ԹԵՐԳԻ» ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Փետրվարի լույս 27-ի գիշերը հրդեհ բռնկվեց Թբիլիսիի Գլդանի թաղամասում գտնվող «Թերգի» առեւտրական կենտրոնում: Այրվել է մոտավորապես 3 հազար քառակուսի մետր մակերես:

Ինչպես տեղեկացրեց Վրաստանի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի ղեկավար Գիորգի Մղեբրիշվիլին, մասնավորապես, այրվել է շուկայի առեւտրական կենտրոնի երրորդ հարկը: Կրակի առաջացման պատճառները հայտնի չեն, ընդ որում, տուժած առեւտրականները հայտարարում են, որ ապրանքներն ապահովագրված չեն եղել, եւ օգնություն են ակնկալում իշխանություններից: «Այրվել է առնվազն 3 հազար քառակուսի մետր տարածք, սակայն ստույգ թվերը հայտնի կլինեն ավելի ուշ»,- լրագրողներին հայտարարեց Գիորգի Մղեբրիշվիլին:

Ավելի վաղ՝ Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն լրագրողներին հայտնեց, որ հրդեհի հետեւանքով տուժածներ չկան եւ հավելեց, որ հրդեհից վնաս ստացածների համար բանկերը, տրված վարկերի մարման հարցում, ծրագրել են հատուկ արտոնություններ:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Լեւոն, Բելլա, Սերգեյ, Ալեքսանդր Արեշեւները ի սրտե շնորհավորում են քրոջ, հորաքրոջ Էմմա Սերգեյի Արեշեւա-Վարդանովային՝ ծննդյան 90-ամյակի եւ Կանանց միջազգային տոնի՝ Մարտի 8-ի առթիվ, մաղթում՝ քաջառողջություն եւ երկարակեցություն:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑ

ԲԱԹՈՒՄԻԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ ԵՆ

Բաթումիի միջազգային օդանավակայանում պլանավորվում են ընդարձակման ենթակառուցվածքային աշխատանքներ: Այդ մասին, հայտարարել է TAV Georgia ընկերության գլխավոր մենեջեր Թեա Զաքարաձեն:

Այս որոշումն ընդունվել է ուղեւորահոսքի սրընթաց աճի եւ նոր ավիաչվերթերի իրականացման կապակցությամբ: Աշխատանքները կսկսվեն մարտի վերջին-ապրիլի սկզբին:

Զաքարաձեի տեղեկատվությամբ՝ օդանավակայանում կավելացնեն ինքնաթիռների համար նախատեսված կայանատեղիները: Բացի այդ, TAV Georgia-ն ոչ մեծ փոփոխություններ է պլանավորում նաեւ Թբիլիսիի միջազգային օդանավակայանում:

Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության «Վրաստանի օդանավակայանների միավորում» ՍՊԸ-ի տնօրեն Քեթեւան Ալեքսիձեի խոսքով, անցյալ տարվա ընթացքում, Բաթումիի օդանավակայանում գրանցվել է ուղեւորների ռեկորդային թվաքանակ, որը, նախորդ տարիների համեմատությամբ, աճել է 59 տոկոսով:

ՍՊՈՐՏ

ՖՈՒՏԲՈԼ. ԱՌԱՋԸՆԹԱՑ ԵՎ ՆԱՀԱՆՋ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանշային նոր աղյուսակը: Նոր սանդղակում Վրաստանի հավաքականը. առաջանալով չորս հորիզոնականով, հանգրվանել է 100-րդ տեղում:, իսկ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը մեկ հորիզոնականով նահանջել է եւս՝ զբաղեցրել 91-րդ տեղը:

Լավագույն 10-յակում փոփոխություն չկա. Աղյուսակը գլխավորում են Գերմանիայի, Բրազիլիայի, Պորտուգալիայի, Արգենտինայի, Բելգիայի, Իսպանիայի, Լեհաստանի, Շվեյցարիայի, Ֆրանսիայիեւ Չիլիի հավաքականները:

ԲԱՍԿԵՏԲՈԼ. ԱՌԱՋԸՆԹԱՑ ՆԱԵՎ ՖԻԲԱ-Ի ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Բասկետբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԲԱ) հերթական վարկանիշային աղյուսակը, որոշակիորեն, արձագանքեց՝ օրերս աշխարհի առաջնության ընտրական խմբային փուլում՝ Վրաստան-Գերմանիա եւ Հայաստան-Ալբանիա հանդիպումների արդյունքներին: Վրաստանի թիմը, 10 միավորի տարբերությամբ, զիջեց մրցակցին ե, հաշվի առնելով նախորդ հանդիպումների արդյունքները, առաջադիմեց ընդամենը մեկ հորիզոնականով եւ զբաղեցրեց 26-րդ տեղը: Հայաստանի թիմը՝ 84:65 հաշվով հաղթելով ալբանացիներին, նույնպես առաջադիմեց մեկ հորիզոնականով, գրավելով 88-րդ տեղը:

ՄԱՇԱԾԵԼ Է «ՆԻՎԱ» ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՍՏԵՂԾՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ԾՆՈՒՆԴՈՎ ԹԲԻԼԻՍԾԻ ԳԻՈՐԳԻ ՄԻՐԶՈՒԵՎԸ

Ութսուներեք տարեկանում, Մոսկվայում, կյանքից հեռացել է «ԱվտոՎԱԶ» մեքենաշինական ընկերության նախկին գլխավոր կոնստրուկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գիորգի Միրզոեւը, որը լեգենդար «Նիվա» մակնիշի ավտոմեքենայի ստեղծողներից է:

Թբիլիսիում ծնված եւ մեծացած Գիորգի Միրզոեւը ավարտել է տեղի թիվ 43 միջնակարգ դպրոցը: Նրա համադասարանցին էր հանրահայտ նկարիչ Գեւորգ Բաշինջաղյանի թոռը՝ Եվգենի Բաշինջաղյանը, ով երկար տարիներ Տոլյատիի «ԱվտոՎԱԶ»-ի ղեկավարներից մեկն էր, իսկ 80-ական թվականներից հանդիսանում էր ԽՍՀՄ ավտոմոբիլային արդյունաբերության նախարարի առաջին տեղակալը: Ներկայումս բնակվում է Մոսկվայում:

Գիորգի Միրզոեւի ղեկավարման օրոք՝ թողարկվել են «ՎԱԶ»-ի տարբեր մակնիշի ավտոմեքենաներ, առանց որոնց խորհրդային ու ռուսական մեքենաշինական ոլորտը դժվար է պատկերացնել:

Վերջին տարիներին կոնստրուկտորը զբաղվում էր վառելիքի այլընտրանքային միջոցներով գործող ավտոմեքենաների ստեղծման ուղղությամբ:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Այլ երկրի բռնակցում: 8.Գյուղաքաղաք Վրաստանում: 9.Գետ Գերմանիայում: 10.Ոճիր, կոտորած: 13.Բույսերից պատրաստված մազերի ներկ: 18.Կանացի զարդ՝ ճարմանդ: 19.Գ.Սունդուկյանի երկերից: 22.Ասորեստանի թագավորության առասպելական հիմնադիրը: 23.Բերքատու: 28.Պատշաճ, սազական: 29.«... տոկուն զինվորիկը», հեքիաթ: 32.Որսի կենդանի: 33.Պողպատի մշակման պրոցես: 34.Գետ Բելառուսում, Ռուսաստանում եւ Լիտվայում: 37.Կուսակցություն Հայաստանում: 39.Մարդուն տրվում է ծնվելիս: 41.Ինչպե՞ս (ժող.): 44.Նիհար: 46.Իրո՞ք, իրա՞վ, իսկապե՞ս: 47.Խոնավ: 49.Սագ (բրբ.): 50.Թվացյալ, ոչ իրական: 52.Ատամնաբույժի գործիք: 54.Մսագործ: 55.Հնոց: 56.Քաղաք Բոլիվիայում ...-Պաս: 57.Քարթվելական լեզվաընտանիքի ազգություն: 58.Լուռ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ֆրանսիացի փիլիսոփա ... Դեկարտ: 2.Երկնիշ թիվ: 3.Սպասավոր: 4.Թունավոր, խոշոր օձ: 5.Արքա: 6.Վրացական հաց: 11.Ներքնադուռ: 12.Քաղաք Ֆրանսիայում, պատմական Նորմանդիայի մայրաքաղաքը: 14.Կուսակրոն քահանա: 15.Ալեքսանդր Դյումայի արկածային ժանրին դասվող վեպ՝ «Կոմս ... Քրիստո»: 16.«Դիետա»՝ եկեղեցու օրենքով: 17.Խոսքի մաս: 20.Նշանակետ: 21.Իտալացի երգահան՝ Ջակոմո Պուչինիի օպերաներից: 24.Ամերիկացի գրող Մարկ ...: 25.Հենց հիմա: 26.Մոնղոլիայի մայրաքաղաքը՝ ...- Բատոր: 27.ՀՀ նախագահի անունը: 30.Նույնպիսի: 31.Առարկայից անդրադարձող լույսային ճառագայթներից աչքի ստացած տպավորությունը, երանգ: 35.Ես ի՞նչ իմանամ (ժող.): 36.Ծես: 37.Բնական գոյացություն: 38.Ուտելիք: 40.Էստոնիայի ԱԳ նախկին նախարարը՝ ... Պաետ: 42.Մինչեւ: 43.Ազգությամբ հայ ֆրանսիական էստրադային երգչուհի Քրիստիան ...: 44.Բուլղարացի-ավստրիացի օպերային երգչուհի ... Վելիչ: 45.Աղիքից պատրաստված: 48.Աքիս: 51.Կորիզապտուղ: 52.Արագացման չափման միավոր CGS համակարգում, հավասար է 1սմ/վ2: 53.Եկեղեցական քաղաք Անգլիայում:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հաբեթ: 5.Բարսեղ: 10.Գիտուն: 11.Որոտան: 13.Դեզ: 14.Շարական: 18.Արա: 19.Նար: 21.Աբել: 24.Խեցի: 25.Նաուրու: 27.Զոհ: 29.Աթոս: 30.Թեա: 33.Ասա: 34.Իլիկ: 36.Հրո: 37.Մի: 38.Վագր: 41.Բանկա: 42.Աստորիա: 44.Սպաս: 46.Մոնակո: 49.Կատու: 50.Գուրգեն: 51.Լոր: 52.Որ: 53.Կատար: 56.Հաշտ: 57.Եզ: 58.Մարի: 59.Իրան: 60.Լարիսա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Արոս: 3.Երաշտ: 4.Չինար: 5.Բուբա: 6.Ան: 7.Սուդան: 8.Ղազար: 9.Պոզնան: 12.Նա: 15.Ռաբունի: 16.Կախեթի: 17.Նիցցա: 20.Այո: 22.Ենթամնա: 23.Լաոս: 26.Ուսամա: 27.Զոհրապ: 28.Հռոդոս: 31.Եկվոր: 32.Ռաբաթ: 35.Լուսակա: 39.Ար: 40.Գիսակ: 43.Սնանկ: 45.Արտաշես: 46.Միգրեն: 47.Զուր: 48.Գորիս: 50.Գորի: 51.Լարի: 54.Ամա: 55.Տար:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445